

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄԱԿՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր) ցանկանալով բարենպաստ պայմաններ ստեղծել մի Պայմանավորվող կողմի ներդրողների՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ներդրումներ կատարելու համար

ընդունելով, որ այդպիսի ներդրումների խրախուսումը եւ փոխադարձ պաշտպանությունը միջազգային համաձայնագրով կնպաստի մասնավոր գործունեության նախաձեռնության խթանմանը եւ բարգավաճմանը երկու պետություններում, պայմանավորվում են հետեւյալի մասին

ՀՈԴՎԱԾ 1
Սահմանումներ

Սույն Համաձայնագրի շրջանակներում տեքստում օգտագործվող տերմիններն ունեն հետեւյալ նշանակությունը՝

1. "ներդրումներ" տերմինի տակ հասկացվում են գույքի բոլոր տեսակները, որոնք ներառում են մասնավորապես, բայց ոչ բացառապես.

ա) շարժական ու անշարժ գույքը եւ գույքային իրավունքները, ինչպիսիք են պարտապանի գույքի վրա կալանք դնելու, գրավի եւ հիպոթեքի իրավունքը,

բ) ընկերության բաժնեմասերը, բաժնետոմսերը եւ պարտատոմսերը եւ ձեռնարկությունում այլ նման տեսակի մասնակցությունը,

գ) դրամական միջոցների, եւ ֆինանսական արժեք ունեցող ցանկացած պարտավորության գծով պահանջների իրավունքները,

դ) մտավոր սեփականության իրավունքները, բարի համբավը, տեխնիկական գործընթացները եւ "նոուհաուն",

ե) օրենքով կամ պայմանագրով շնորհված գործունեության կոնցեսիաներ՝ ներառյալ բնական ռեսուրսների հետազոտությունների, ուսումնասիրությունների կամ շահագործման իրավունքի համար տրվող կոնցեսիաները,

Նման ունեցվածքների ձեւի ինչպիսին, որ եղել է ներդրման պահին, փոփոխությունը չի ազդում ներդրման բնույթի վրա եւ "ներդրում" տերմինը ներառում է բոլոր ներդրումները, որոնք կատարվել են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո,

2. "Եկամուտ" տերմինը նշանակում է ներդրումներից ստացված գումարները, եւ մասնավորապես, բայց ոչ բացառապես, ներառում է շահույթները, տոկոսները, կապիտալի աճից ստացված եկամուտները, դիվիդենտները, ռոյալթիները եւ այլ վարձատրությունները,

3. "Քաղաքացի" տերմինի տակ հասկացվում են.

ա) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձինք,

բ) Եգիպտոսի Արաբական Հանրապետության դեպքում՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետության գործող օրենսդրությամբ Եգիպտոսի Արաբական Հանրապետության քաղաքացու կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձինք:

4. "ընկերություններ" նշանակում են՝

ա) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ կորպորացիաները, ձեռնարկությունները եւ ընկերակցություններ, որոնք կազմավորվել կամ հիմնադրվել են Հայաստանի Հանրապետության ցանկացած տարածքում համաձայն գործող օրենքի եւ նրա տարածքում ունեն իրենց գլխադասային մարմինը,

բ) Եգիպտոսի Արաբական Հանրապետության դեպքում՝ կորպորացիաները, ձեռնարկությունները եւ ընկերակցություններ, որոնք կազմավորվել կամ հիմնադրվել են Եգիպտոսի Արաբական Հանրապետության ցանկացած տարածքում համաձայն գործող օրենքի եւ նրա տարածքում ունեն իրենց գլխադասային մարմինը,

5. "տարածք" տերմինը նշանակում է՝

ա) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքը,
բ) Եգիպտոսի Արաբական Հանրապետության դեպքում՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետության տարածքը:

ՀՈՂՎԱԾ 2

Ներդրումների խրախուսում եւ պաշտպանություն

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է խրախուսի եւ բարենպաստ պայմաններ ստեղծի մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների եւ ընկերությունների համար՝ իր տարածքում ներդրումներ կատարելու համար, եւ ընդունի այդպիսի ներդրումները՝ համաձայն իր օրենքների:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի քաղաքացիների եւ ընկերությունների ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում միշտ կարժանանան հավասար եւ արդար վերաբերմունքի եւ կօգտվեն լիակատար պաշտպանությունից եւ անվտանգությունից: Ոչ մի Պայմանավորվող կողմ իր տարածքում չպետք է անխոհեմ կամ խտրական միջոցներով որեւէ կերպ խոչընդոտի մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումների կառավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, շահագործմանը կամ տնօրինմանը կամ փոխանցմանը: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կկատարի մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումների նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորություն:

ՀՈՂՎԱԾ 3

Ազգային եւ առավել բարենպաստության ռեժիմ

1. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը իր տարածքում չպետք է մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների եւ ընկերությունների ներդրումների եւ եկամուտների նկատմամբ կիրառի ավելի պակաս բարենպաստ ռեժիմ, քան իր քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումների կամ եկամուտների կամ երրորդ պետության քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումների կամ եկամուտների նկատմամբ կիրառվող ռեժիմն է:

2. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը իր տարածքում չպետք է խոչընդոտի մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիներին կամ ընկերություններին կառավարելու, պահպանելու, շահագործելու, օգտագործելու եւ տնօրինելու իրենց ներդրումները եւ պետք է տրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրամադրում է իր սեփական կամ որեւէ երրորդ պետության քաղաքացիներին կամ ընկերություններին:

3. Կասկածներից խուսափելու համար հավաստիացվում է, որ առաջին եւ երկրորդ կետերում նշված վերաբերմունքը կկիրառվի սույն Համաձայնագրի 1-11 հոդվածների նկատմամբ:

ՀՈՂՎԱԾ 4

Վնասների փոխհատուցում

1. Եթե մի Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում վնաս են կրում պատերազմի կամ այլ զինված ընդհարումների, հեղափոխության, արտակարգ իրավիճակի, խռովության, ապստամբության կամ զանգվածային անկարգությունների կամ այլ պատճառներով, ապա վերջին Պայմանավորվող կողմը կապված վնասի վերականգնման, փոխհատուցման կամ այլ բնույթի կարգավորումների հետ, պետք է ցուցաբերի ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան այն, որը ցուցաբերում է իր սեփական քաղաքացիների

կամ ընկերությունների նկատմամբ կամ որեւէ երրորդ պետության քաղաքացիների կամ ընկերությունների նկատմամբ: Որպես փոխհատուցում կատարվող վճարումները պետք է լինեն ազատ փոխանցելի:

2. Առանց հակասելու սույն հոդվածի 1-ին կետին, մի Պայմանավորվող կողմի քաղաքացիները եւ ընկերությունները, որոնք սույն կետում նշված որեւէ իրավիճակում վնաս են կրել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում հետեւյալ պատճառներով՝

ա) զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց ունեցվածքի բռնագրավում, կամ

բ) զինված ուժերի կամ իշխանությունների կողմից նրանց ունեցվածքի ոչնչացում, որը հետեւանք չէ պատերազմական գործողությունների կամ չի բխում իրադրության անհրաժեշտությունից,

պետք է ստանան համարժեք փոխհատուցում: Որպես փոխհատուցում կատարվող վճարումները պետք է լինեն ազատ փոխանցելի:

ՀՈԴՎԱԾ 5 Սեփականագրկում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումները մյուս Պայմանավորվող կողմի տարածքում չեն կարող ազգայնացվել, բռնագրավվել կամ ենթարկվել ազգայնացմանը կամ բռնագրավմանը համարժեք ազդեցություն ունեցող միջոցների (այսուհետ՝ սեփականագրկում), բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ պետության՝ ելնելով այդ կողմի ներքին կարիքներից, անխտրականության հիման վրա եւ արագ, համարժեք եւ արդյունավետ փոխհատուցման դիմաց: Այդպիսի փոխհատուցումը պետք է հավասար լինի անմիջապես մինչեւ սեփականագրկումը բռնագրավված ներդրումների բուն արժեքին, պետք է ներառի մինչեւ վճարման օրը եղած սովորական առեւտրային տոկոսները, պետք է կատարվի առանց ոչ խելամիտ ձգձգումների, լինի գործնականում իրագործելի եւ ազատ փոխանցելի: Զաղաքացիները կամ ընկերությունները, որոնց շահերը ոտնահարվել են, իրավունք ունեն սեփականագրկում իրականացնող Պայմանավորվող կողմի օրենսդրությանը համապատասխան դիմելու այդ կողմի դատական կամ այլ անկախ մարմին իրենց խնդրի քննության եւ իրենց ներդրումների գնահատման համար՝ սույն կետում նշված սկզբունքների համաձայն:

2. Եթե Պայմանավորվող կողմը սեփականագրկում է մի ընկերության ունեցվածքը, որը կազմավորվել կամ հիմնադրվել է իր տարածքում՝ գործող օրենսդրության համաձայն, եւ որում մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիները կամ ընկերությունները բաժնեմաս ունեն, ապա առաջին Պայմանավորվող կողմը պետք է ապահովի, որպեսզի սույն հոդվածի առաջին կետի դրույթները կիրառվեն անհրաժեշտ չափով՝ երաշխավորելու համար մյուս Պայմանավորվող կողմի՝ բաժնեմաս ունեցող քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումների արագ, համարժեք եւ արդյունավետ փոխհատուցումը:

ՀՈԴՎԱԾ 6 Եկամուտների եւ ներդրումների հայրենադարձումը

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումների համար պետք է երաշխավորի այդ ներդրումների եւ եկամուտների փոխանցումը՝ առանց որեւէ սահմանափակման: Փոխանցումները պետք է կատարվեն արագ, փոխարկելի տարադրամով, որով որ ներդրվել էր սկզբնական կապիտալը

կամ այլ՝ ներդրողի եւ համապատասխան Պայմանավորվող կողմի միջեւ համաձայնեցված տարադրամով: Ներդրողի հետ այլ համաձայնության բացակայության դեպքում փոխանցումները պետք է կատարվեն փոխանցման օրվա տվյալ երկրի փոխանակման տոկոսադրույքով՝ համաձայն փոխանակման գործող կանոնակարգերի:

ՀՈՂՎԱԾ 7 Բացառություններ

Սույն Համաձայնագրի այն դրույթները, որոնք վերաբերվում են յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կամ որեւէ երրորդ պետության քաղաքացիներին կամ ընկերություններին տրամադրվող ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմի տրամադրմանը չպետք է մեկնաբանվեն որպես պարտավորեցնող Պայմանավորվող կողմերից որեւէ մեկին մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների վրա տարածելու այլ ռեժիմի շահավետություն, նախապատվություն կամ արտոնություններ, որոնք հետեւանք են՝

ա) գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվելիք ցանկացած մաքսային միության կամ համանման միջազգային համաձայնության, որոնց Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը անդամ է կամ կարող է անդամ դառնալ,

բ) ցանկացած միջազգային համաձայնագրի կամ պայմանավորվածության, որը ամբողջապես կամ գլխավորապես առնչվում է հարկերին կամ ամբողջապես կամ գլխավորապես հարկերին առնչվող այլ տեղական օրենսդրությանը:

ՀՈՂՎԱԾ 8

Մի պայմանավորվող կողմի եւ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջեւ վեճերի լուծումը

1. Պայմանավորվող կողմերը կաշխատեն մի Պայմանավորվող կողմի եւ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջեւ ցանկացած վեճ լուծել բարեկամական ճանապարհով:

2. Եթե որեւէ այդպիսի վեճ է առաջանում եւ այն չի լուծվում վեց ամսվա ընթացքում, ապա այն, Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով, պետք է ներկայացվի Միջնորդ դատարան: Միջնորդ դատարանը պետք է ղեկավարվի Միավորված Ազգերի Կազմակերպության Միջազգային առետրի իրավունքի Հանձնաժողովի արբիտրաժային Կանոններով՝ ընդունված Միավորված Ազգերի Գլխավոր ասամբլեայի 1976 թ. դեկտեմբերի 15-ի 31/98 Բանաձեւով, եթե Կողմերը այլ համաձայնության չգան:

3. Միջնորդ դատարանի որոշումը պետք է լինի վերջնական եւ պարտադիր վեճի բոլոր կողմերի համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ այդ որոշումը կկատարի իր օրենսդրության համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 9

Պայմանավորվող կողմերի միջեւ վեճերի լուծումը

1. Պայմանավորվող կողմերը համագործակցության ոգով կփնտրեն սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ ծագած վեճերի արագ եւ արդարացի լուծում:

2. Եթե Պայմանավորվող կողմերի միջեւ վեճը հնարավոր չլինի լուծել այս ճանապարհով վեց ամսվա ընթացքում, ապա Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ վեճը կներկայացվի ad hoc Միջնորդ դատարանին:

3. Միջնորդ դատարանը կստեղծվի հետեւյալ ճանապարհով: Միջնորդ դատարանին դիմելու խնդրանք ստանալուց հետո, վեց ամսվա ընթացքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կնշանակվի միջնորդ դատարանի մեկ անդամի: Նշանակված երկու անդամները այնուհետեւ կընտրեն երրորդ երկրի քաղաքացու, որը Պայմանավորվող կողմերի հավանությամբ կնշանակվի Միջնորդ դատարանի Նախագահ (այսուհետ՝ Նախագահ): Նախագահը կնշանակվի երկու ամսվա ընթացքում՝ Միջնորդ դատարանի երկու անդամների նշանակման օրվանից սկսած:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետում անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում, ապա, որեւէ այլ համաձայնության բացակայության դեպքում, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է հրավիրել

Արդարադատության միջազգային դատարանի Նախագահին՝ կատարելու այդ նշանակումները:

Եթե Նախագահը Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի է, կամ, եթե որեւէ այլ բան խոչընդոտում է նրա կողմից նշված գործառույթը կատարելուն, ապա անհրաժեշտ նշանակումները կատարելու համար պետք է հրավիրվի փոխնախագահը: Եթե փոխնախագահը նույնպես Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի քաղաքացի է կամ որեւէ այլ բան խոչընդոտում է նշված գործառույթը կատարելուն, նշանակումներ կատարելու համար պետք է հրավիրվի Արդարադատության միջազգային դատարանի ըստ պաշտոնի ավագության հաշորդ անդամը, որը Պայմանավորվող կողմերից ոչ մեկի քաղաքացի չէ:

5. Միջևորդ դատարանը իր որոշումը կկայացնի ձայների մեծամասնությամբ: Այդ որոշումը պարտադիր է Պայմանավորվող կողմերի համար: Միջևորդ դատարանը ինքն է որոշում իր աշխատակարգը:

ՀՈՂՎԱԾ 10 Սուբրոգացիա

1. Եթե Պայմանավորվող կողմերից մեկը կամ նրա կողմից որոշված մարմինը (առաջին Պայմանավորվող կողմ) կատարում է վճարումներ մյուս Պայմանավորվող կողմի (երկրորդ Պայմանավորվող կողմ) տարածքում ներդրումների հետ կապված հատուցումներով, ապա երկրորդ Պայմանավորվող կողմ կճանաչի.

ա) օրենքով կամ իրավական ակտով հատուցում ստացող կողմի բոլոր իրավունքների եւ պահանջների փոխանցումը առաջին Պայմանավորվող կողմին, եւ

բ) որ առաջին Պայմանավորվող կողմին սուբրոգացիաների շնորհիվ իրավունք է վերապահվում միեւնույն չափով գործադրել այնպիսի իրավունքներ եւ կիրառել այնպիսի պահանջներ, ինչպիսին գործադրում եւ կիրառում է հատուցվող կողմը:

2. Առաջին Պայմանավորվող կողմը բոլոր պարագաներում կունենա նույն վերաբերմունքը.

ա) փոխանցման շնորհիվ ձեռք բերված իրավունքների եւ պահանջների նկատմամբ, եւ

բ) այսպիսի իրավունքներից եւ պահանջներից բխող ցանկացած վճարումների նկատմամբ,

ինչպիսիք սույն Համաձայնագրի համաձայն ունի հատուցվող կողմը ներդրումներին եւ դրանց հետ կապված եկամուտներին նկատմամբ:

3. Ձեռք բերված իրավունքների եւ պահանջների դիմաց առաջին Պայմանավորվող կողմից ոչ փոխարկելի տարադրամով ստացված ցանկացած վճարում, պետք է ազատորեն մատչելի լինի երկրորդ Պայմանավորվող կողմի տարածքում կատարված ցանկացած ծախսեր

վճարելու համար:

ՀՈՂՎԱԾ 11 Այլ կանոնների կիրառում

Եթե յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի օրենքի դրույթները կամ Պայմանավորվող կողմերի միջեւ գործող կամ ապագայում կնքվելիք միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունները, ի լրումն սույն Համաձայնագրի, պարունակում են ընդհանուր կամ առանձնահատուկ կանոններ, որոնք մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիների կամ ընկերությունների ներդրումներին կտրամադրեն առավել բարենպաստ ռեժիմ, քան սահմանված է սույն Համաձայնագրով, ապա

այդպիսի կանոնները կգերակայեն սույն Համաձայնագրի նկատմամբ առավել բարենպաստության մասով:

ՀՈՂՎԱԾ 12 Ռեժի մեջ մտնելը

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս կողմին գրավոր կժանուցի իր տարածքում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված իրավական ընթացակարգերն ավարտելու:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի երկու ծանուցումների փոխանակման օրվանից:

ՀՈՂՎԱԾ 13 Տեւողությունը եւ դադարեցումը

Սույն Համաձայնագրի գործողության ժամկետը 10 տարի է: Այն կշարունակի ուժի մեջ մնալ 12 ամսվա ընթացքում՝ հաշված այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը գրավոր կժանուցի մյուս կողմին դրա գործողությունը դադարեցնելու մասին: Համաձայնագրի գործողության ժամանակահատվածում կատարված ներդրումների նկատմամբ Համաձայնագրի դրույթները կշարունակեն գործել սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելուց հետո 20 տարի ժամանակահատվածով եւ առանց հակասելու ընդհանուր միջազգային իրավունքի կանոններին:

Ի հաստատումն վերը նշվածի համապատասխան կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորվածներ ներքոստորագրողները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երեւան քաղաքում, 1996 թ. հունիսի 9-ին, երկու բնօրինակից՝ հայերեն, արաբերեն եւ անգլերեն. ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության հայտարարությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ 1996 թ. հունիսի 9-ին ստորագրված ներդրումների խրախուսման եւ պաշտպանության մասին Համաձայնագիրը վավերացնելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության 2004 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 01/2109 հայտագիրը եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ թիվ 193 հայտագիրը կկազմեն համաձայնություն "Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ ստորագրված ներդրումների խրախուսման եւ պաշտպանության մասին" Համաձայնագրի 5-րդ հոդվածի մեկնաբանության վերաբերյալ:

Նշված հայտագրերը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. փետրվարի 21-ից:

AGREEMENT

Between the Government of the Republic of Armenia and the
Government of the Arab Republic of Egypt for the promotion and
protection of investments

The Government of the Republic of Armenia and the Government of the
Arab Republic of Egypt (hereinafter referred to the Contracting Parties),

desiring to create favourable conditions for greater investment by nationals and companies of one State in the territory of the other State, reckoning that the encouragement and reciprocal protection under international agreement of such instatements will be conducive to the stimulation of individual business initiative and will increase prosperity in both States,
have agreed as follow:

Article 1 Definitions

For the purposes of this Agreement:

(1) "Investment means every kind of assets and in particular, though not exclusively, includes:

(a) movable and immovable property and any other property rights such as mortgages, liens or pledges.

(b) shares in the stock and debentures of a company and any other from of participation in a company.

(c) claims to many or to any performances under contract having a financial value.

(d) intellectual property rights, goodwill, technical processes and know-how.

(e) business concessions conferred by law or under contract, including concessions to search for, cultivate, extract or exploit natural resources.

A change in the form in which assets are invested does not affect their character as investments and the term "investment" includes all investments made from the date of entry into force of this Agreement.

(2) "return" means the amounts yielded by an investment and particular, though not exclusively, includes profit, interest, capital gains, dividends, royalties and fees.

(3) "national" means:

(a) in respect of the Republic of Armenia:

physical persons deriving their status as nationals of the Republic of Armenia from the law in force in the Republic of Armenia

(b) in respect of the Arab Republic of Egypt:

physical persons deriving their status as nationals of the Arab Republic of Egypt,

(4) "companies" means

(a) in respect of the Republic of Armenia:

corporations, firms and associations incorporated or constituted under the law in force in any part of the Republic of Armenia and having their headquarters in its territory;

(b) in respect of the Arab Republic of Egypt:

corporations, firms and associations incorporated or constituted under the law in force in any part of the Arab Republic of Egypt an having their headquarters in its territory;

(5) "territory" means

(a) in respect of the Republic of Armenia:

territory of the Republic of Armenia;

(b) in respect of the Arab Republic of Egypt:

territory of the Arab Republic of Egypt;

Article 2 Promotion and protection of investment

(1) Each Contracting Party shall encourage and create favorable conditions for nationals or companies of the other Contracting Party to invest capital in its territory, and, subject to its right to exercise powers conferred by its law, shall admit such capital.

(2) Investments of nationals or companies of each Contracting Party shall at all times be accorded fair and equitable treatment and shall enjoy full protection and security in the territory of the other Contracting Party. Neither Contracting Party shall in any way impair by unreasonable or discriminatory measures the management, maintenance, use, enjoyment or disposal of investments in its territory of nationals or companies of the other Contracting Party shall observe any obligation it may have entered into with regard to investments of nationals or companies of the other Contracting Party.

Article 3

Nation treatment and most-favoured-nation provisions

(1) Neither Contracting Party shall in its territory subject investments or returns of nationals or companies of the other Contracting Party to treatment less favourable than which it accords to investments or returns of its own nationals or companies of any third State.

(2) Neither Contracting Party shall in its territory subject nationals or companies of the other Contracting Party, as regards their management, maintenance, use, enjoyment or disposal of their investments, to treatment less favourable than that which it accords to its own nationals or companies or to nationals or companies of any third State.

(3) For the avoidance of doubt it is confirmed that the treatment provided for the paragraphs (1) and (2) above shall apply to the provisions of Articles 1 to 11 of this Agreement.

Article 4

Compensation for losses

(1) Nationals or companies of one Contracting Party whose investments in the territory of the other Contracting Party suffer losses owing to war or other armed conflict, revolution, a state of national emergency, revolt, insurrection or riot in the territory of the latter Contracting Party shall be accorded by latter Contracting Party treatment, as regards restitution, indemnification, compensation or other settlement, no less favourable than that which the latter Contracting Party accords to its own nationals or companies or to nationals or companies of any third State. Resulting payments shall be freely transferable.

(2) Without prejudice to paragraph (1) of this Article, nationals and companies of one Contracting Party who in any of the situations referred to in that paragraph suffer losses in the territory of the other Contracting Party resulting from:

- (a) requisitioning of their property by the forces or authorities, or
- (b) destruction of their property by the forces or authorities, which was not caused in combat action or was not required by the necessity of the situation shall be accorded restitution or adequate compensation. Resulting payments shall be freely transferable.

Article 5

Expropriation

(1) Investments of nationals or companies of either Contracting Party shall not be nationalised, expropriated or subjected to direct measures having effect equivalent to nationalisation or expropriation (hereinafter referred to as "expropriation") in the territory of the other Contracting Party except for a public purpose related to the internal needs of that Party on a non-discriminatory basis and against prompt, adequate and effective compensation. Such compensation shall amount to the genuine value of the investment expropriated immediately before the expropriation, shall include interest at a normal commercial rate until the date of payment, shall be made without any unreasonable delay, be effectively realizable and be freely transferable. The national or company affected shall have a right, under the law of the Contracting Party making the expropriation, to prompt review, by a judicial or other independent authority of that Party, of his or its case and of the valuation of his or its investment in accordance with the principles set out in this paragraph.

(2) Where a Contracting Party expropriates the assets of a company which is incorporated or constituted under the law in force in any part of its own territory, and in which nationals or companies of the other Contracting Party own shares, it shall ensure that the provisions of paragraph (1) of this Article are applied to the extent necessary to guarantee prompt, adequate and effective compensation in respect of their investment to such nationals or companies of the other Contracting Party. Who are owners of those shares.

Article 6

Reparation of investment and returns

Each Contracting Party shall in respect of investment guarantee to nationals or companies of the other Contracting Party the unrestricted transfer of their investments and returns. Transfers shall be effected without delay in the convertible currency in which the capital was originally invested or in any other convertible currency agreed by the investor and the Contracting Party concerned. Unless otherwise agreed by the investor transfers shall be made at the rate of exchange applicable in the host state on the date of transfer pursuant to the exchange regulations in force.

Article 7

Exceptions

The provisions of this Agreement relative to the grant of treatment not less favourable than that accorded to the nationals or companies of either Contracting Party or of any third State shall not be construed so as to oblige one Contracting Party to extend to the nationals or companies of the other the benefit of any treatment, preference or privilege resulting from:

(a) any existing or future customs union or similar international agreement to which either of the Contracting Parties is or may become a party, or

(b) any international agreement or arrangement relating wholly or mainly to taxation or any domestic legislation relating wholly or mainly to taxation.

Article 8

Settlement of disputes between one Contracting Party and an investor of the other Contracting Party

(1) The Contracting Parties shall strive to settle any dispute between one Contracting Party and an investor of the other Contracting Party in an amicable way

(2) If any such dispute should arise and cannot be settled within six months it shall be submitted, at the request of either Party, to arbitration. The arbitration shall be conducted in accordance with the Arbitration Rules of the United Nations Commission on International Trade Law, as adopted in Resolution 31/98 of the United Nations General Assembly on 15 December 1976, unless the Parties otherwise agree.

(3) The arbitration decision shall be final and binding upon all Parties to the dispute. Each Contracting Party shall undertake to fulfill the decision in accordance with its legislation.

Article 9

Settlement of disputes between one Contracting Party

(1) The Contracting Parties shall in the spirit of cooperation seek for a quick and just settlement of any disputes between them concerning the interpretation or application of this Agreement.

(2) If a dispute between the Contracting Parties cannot thus be settled within six months, it shall upon the agreement of the Contracting Parties be submitted to Arbitration Court ADHOC.

(3) The Arbitration Court shall be constituted in the following way. Within six months after the receipt of the request for arbitration each Contracting Party shall appoint one member of the Arbitration Court. The appointed two members shall then select a national of a third country who, on the approval of the two Contracting Parties, shall be appointed Chairman of the Arbitration Court (hereinafter referred to as the "chairman"). The Chairman shall be appointed within two months from the date of appointment of the other two members of the Arbitration Court.

(4) If within the periods specified in paragraph (3) of this Article the necessary appointments have not been made, either Contracting Party may, in the absence of other agreements, invite the President of the International Court of Justice to make such appointments. If the President is a citizen of either Contracting Party or if he otherwise is prevented from discharging the said function, the Vice-President shall be invited to make the necessary appointments. If the Vice-President is a citizen of either Contracting Party or he is also prevented from discharging the said function, the member of the International Court of Justice next in seniority who is not a citizen of either Contracting Party shall be invited to make the necessary appointments.

(5) The Arbitration Court shall reach its decision by a majority of votes. Such decision shall be binding upon both Contracting Parties. The Arbitration Court shall determine its own procedure.

Article 10

Subrogation

(1) If one Contracting Party or its designated Agency ("the first Contracting Party ") makes a payment under an indemnity given in respect of

an investment in the territory of the other Contracting Party, ("the second Contracting Party"), the second Contracting Party shall recognize:

(a) the assignment to the first Contracting Party by law or by legal transaction of all the right and claims of the party indemnified, and

(b) that the first Contracting Party is entitled to exercise such rights and enforce such claims by virtue of subrogation, to the same extent as the party indemnified.

(2) The first Contracting Party shall be entitled in all circumstances to the same treatment in respect of:

(a) the rights and claims acquired by it by virtue of the assignment, and

(b) any payments received in pursuance of those rights and claims, as the party indemnified was entitled to receive by virtue to this Agreement in respect of the investment concerned and its related returns.

(3) Any payments received in non-convertible currency by the first Contracting Party in pursuance of the rights and claims acquired shall be freely available to the expenditure incurred in the territory of the second Contracting Party.

Article 11

Application of other rules

In the provisions of law of either Contracting Party or obligations under international law existing at present or established hereafter between the Contracting Parties in addition to the present Agreement contain rules, whether general or specific, entitled investments by nationals or companies of the other Contracting Party to a treatment more favourable than is provided for by the present Agreement, such rules shall to the extent that they are more favourable prevail over the present Agreement.

Article 12

Entry into force

Each Contracting Party shall notify the other in writing of the completion of the legal procedures required in its territory for the entry into force of this Agreement.

This Agreement shall enter into force on the date of the two notifications.

Article 13

Duration and termination

This Agreement shall remain in force for a period of ten years. Thereafter it shall continue in force until the expiration of twelve months from the date on which either Contracting Party shall have given written notice of termination to the other. Provided that in respect of investments made whilst the Agreement is in force, its provisions shall continue in effect with respect to such investments for a period of twenty years after the date of termination and without prejudice to the application thereafter of the rules of general international law.

In witness whereof the undersigned, duly authorised thereto by their respective Governments, have signed this Agreement.

Done at Yerevan on 9 June 1996 in two originals in Armenian, Arabic and English languages, all texts are authentic. In case of divergence of interpretation the English text shall prevail.

The Agreement has entered into force on 21.02.2006.